Հարգարժան մարզպետ, հարգելի գործընկերներ,

2022 թվականին մարզում սուբվենցիոն ծրագրով հաստատվել էր թվով 60 ծրագրեր՝ ընդհանուր 12.1 մլրդ դրամ բյուջեով:

Ընթացող շինարարությունների ժամանակ վարչության կողմից պարբերաբար կատարվել են չպլանավորված այցելություններ,մշտադիտարկումներ և քննարկումներ՝ ուղղված շինարարությունների որակի բարձրացման և դրանց ժամկետներում կատարման ապահովմանը: Այցելությունների ընթացքում որոշ համայնքներում ի հայտ են եկել բազմաթիվ թերություններ, որոնց վերաբերյալ կազմվել են համապատասխան արձանագրություններ: Արձանագրությոնները ուղարկվել են համայնքների ղեկավարներին՝ հրահանգելով անհապաղ ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ ներգրավելով կապալառու կազմակերպությանը, տեխնիկական և հեղինակային հսկողություն իրականացնող կազմակերպություններին՝ բացահայտված թերությունները վերացնելու ուղղությամբ: Արձանագրված թերությունների մի մասը շտկվել են,իսկ որոշ ծրագրեր դեռ ընթացքի մեջ են:

Հարկ եմ համարում նշել, որ ավարտված շինարարական օբյեկտի շահագործման ընդունող հանձնաժողովի ակտերը չեն ստորագրվելու մինչև հայտնաբերված թերությունները չվերացվեն:

2022 թվականին սուբվենցիոն ծրագրով հաստատված թիվ 60 ծրագրերից 32-ը ավարտվել են, որոնցից 22 ծրագրերի մասով արդեն իսկ ստորագրվել է ավարտված շինարարական օբյեկտի շահագործման ընդունող հանձաժողովի ակտը, իսկ մնացած 28 ծրագրերը դեռ ընթացքի մեջ են:

2022 թվականին ՀՀ պետական բյուջեով Կոտայքի մարզում հիմնանորոգվել է շուրջ 57 կմ ճանապարհահատված:

- Նոր Գեղի-Արգել-Արզական-Հրազդան հանրապետական նշանակության ճանապարհի 8 կմ (մինչև Արգել) և 10,8 կմ (Բջնիի հատված) ճանապարհները (ընդհանուր՝ 18,8 կմ)
- Աբովյան- Արզնի - Նոր Գեղի հանրապետական նշանակության ճանապարհի 1,2 կմ հատված (Աբովյանի դիսպանսերի տարածք)
- Գառնի-Գեղարդ տանող հանրապետական նշանակության ավտոճանապարհի 6 կմ հատված

- Երևան-Սևան-Իջևան միջպետական նշանակության ճանապարհին 14.56 կմ հատված
- Երևան-Աշտարակ միջպետական նշանակության ավտոճանապարհի 8 կմ հատված:
- Պետական բյուջեով հիմնանորոգվել են նաև Հրազդանի ներհամայնքային ճանապարհներ Վանատուր, Ջրառատ, Հարավային թաղամասերում՝ ընդհանուր 4,74 կմ:
- Ավարտվել է նաև Գառնի-Լանջազատ մարզային նշանակության ճանապարհի հիմնանորոգումը (մարզի տարածքում 3,7 կմ), որը Կոտայքի և Արարատի մարզերն իրար կապող ամենակարճ ճանապարհն է: 2022 թվականին Կոտայքի մարզային նշանակության ավտոճանապարհներին իրականացվել է 120,5 կմ ամառային պահպանության և 120.8 կմ ձմեռային պահպանության աշխատանքներ: 2023 թվականին շուրջ 30%-ով կավելանա պահպանվող ճանապարհների երկարությունը:

2022 թվականին Կոտայքի մարզում ներդրվեց միասնական երթուղային ցանցի աշխատանքները և հաղթող ճանաչված փոխադրող ընկերությունը արդեն իսկ իրականացնում է կանոնավոր ուղևորափոխադրումներ՝ ընկերության և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության միջև կնքված պայմանագրի համաձայն: Տարվա ընթացքում քաղաքացիների կողմից եղան մի շարք բողոքներ կապված ուղեվարձի թանկացման հետ, ինչի վերաբերյալ մարզպետի հանձնարարությամբ կազմակերպվեցին մի շարք քննարկումներ, սակայն գնային փոփոխության վերաբերյալ փոխադրումն իրականացնող կազմակերպության հետ համաձայնություն ձեռք չի բերվել: Այնուամենայնիվ շարունակում ենք ձեռնարկել համապատասխան միջոցներ հարցին հնարավորինս վերջնական լուծում տալու համար:

Մարզի 7 համայնքներում մասնակցել ենք վարչական հսկողության շրջանակներում համայնքների՝ քաղաքաշինության, տրանսպորտի և կապի բնագավառներում համայնքների ղեկավարների գործունեությունների ուսումնասիրության աշխատանքներին:

Հայտնաբերվել է 302 ինքնակամ շինարարության դեպքեր, որոնց վերաբերյալ համայնքների ղեկավարներին առաջարկվել է օրենքով սահմանված կարգով վերացնել թերությունները:

Մասնակցել ենք պետական, համայնքային և հանրակրթական դպրոցների բյուջեների միջոցներով իրականացված շինարարական օբյեկտը ընդունող հանձնաժողովի աշխատանքներին:

Վերահսկողություն ենք իրականացրել համայնքներում ինքնակամ շինարարությունների հայտնաբերման և կանխարգելման ուղղությամբ՝ առաջարկելով համայնքների ղեկավարներին իրենց լիազորությունների շրջանակներում չթույլատրել իրականացնել ինքնակամ շինարարություններ, իսկ արդեն կատարված ինքնակամ շինությունների վերաբերյալ ձեռնարկել գործուն քայլեր՝ քանդման կամ օրինականացման ուղղություններով:

Վերահսկողություն է իրականացվել համայնքների վարչական տարածքներում խմելու ջրի մատակարարման, ջրահեռացման, գազամատակարարման և էլեկտրական էներգիայի մատակարարման համակարգերի սանիտարական պահպանման և անվտանգության գոտիների պահպանման ուղղությամբ՝ առաջարկելով համայնքների ղեկավարներին ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ արգելելու վերոնշյալ գոտիներում իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից կատարվող հողազավթումները և ինքնակամ շինարարությունները:

Հայաստանի հանրապետության կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1038-Ն որոշման համաձայն՝ Գառնի համայնքի Ողջաբերդ բնակավայրի սողանքային գոտում գտնվող 15 շահառուներ ստացել են ֆինանսական աջակցություն բնակարանի գնման վկայագրի միջոցով՝ 241 մլն 897 հազ. ՀՀ դրամի չափով: Մարզպետարանի և Գառնիի համայնքապետարանի համատեղ աշխատանքների շնորհիվ 12 շահառուների հետ կնքվել են համապատասխան պայմանագրեր, որի արդյունքում ձեռք են բերվել կառավարության կողմից սահմանված չափանիշներին համապատասխան բնակարաններ:

Ամփոփելով ելույթս տեղեկացնում եմ, որ 2023 թվականի ընթացքում ևս շարունակելու ենք իրականացնել մեր վրա դրված գործառույթները՝ նպատակ ունենալով համայնքներում ներդրվող քաղաքաշինական ծրագրերի արդյունավետ իրականացմանը:

Քաղաքաշինության վարչության պետ՝ Հրաչյա Վարդանյան